

## Ծառայություններ որոք նեցուկ կը կանգնին ձեր գաւկին

Երբ ձեր գաւակը կը հասնի դպրոց կամ ուսումնական խորհուրդի կեդրոն կը գնահատուին անոր Ֆրանսերէն լեզուի գիտութիւնը, կրնան նաև գնահատուիլ անոր ուսողութեան գիտելիքները, նոյնպէս կրնայ մասնակցիլ հարցազրոյցի մը:

Վերոյիշեալ գնահատումները առիթը կուտան որոշելու թէ արդեօք ձեր գաւակը պէտք ունի աչակցութեան և յատուկ **ծառայություններու Ֆրանսերէն լեզուն սորուելու համար**, որպէսզի շարունակէ իր ուսումը Ֆրանսերէնով և յաջողի բոլոր դասաւանդուած նիւթերուն մէջ: Այս ծառայությունները կրնան տրամադրուիլ բնական դասարանին մէջ կամ յատուկ դասարանի մը մէջ որ կ'աշխատի Քվեբէկ նոր ժամանած աշակերտները ներառելու: Ձեր գաւակը կը ստանայ այս ծառայությունները որպէսզի ան կարողանայ շարունակել ուսումը Ֆրանսերէն լեզուով, միննոյն ժամանակ

կրնայ կրթութիւն ստանալ ուսուցման բոլոր ոլորտներուն մէջ:

Դպրոցներու մէջ կը տրամադրուին **լրացուցիչ կրթական ծառայություններ** որոնց հիմնական նպատակն է աջակցիլ ուսանողներու ուսման մէջ յաջողութեան: Օրինակի համար այդ ծառայությունները կրնան տրամադրուիլ կրթական գնահատման, կրթական հոգեբանութեան մասնագէտներու կողմէ կամ հոգեբաններու կողմէ:

**Այլ ծառայություններ** որ կրնան տրամադրուիլ դպրոցի երթեւեկ (կը տրամադրուի որոշ պայմաններով), ճաշի ժամանակամիջոցի հսկողութիւն մանկապարտէզի և նախակրթարանի մէջ, ճաշի կամ սրճարանի մատուցում (այս ծառայությունները ձրի չեն): Ձեր գաւկին յաճախած վարժարանը ձեզի կը ներկայացնէ իր տրամադրած ծառայություններու տուեալները:

## Ծնողներու տրամադրուած ծառայություններ

**Զափահասներու վերամշակումի** հարցով՝ ընթացիկ տարեշրջանի Յունիսի 30 ին, վերականգման ծրագիր կը տրամադրուի ուսումնական խորհուրդներու կողմէ, բաւարարելու համար տարիքով 16է վեր աշակերտներուն պէտքերը և ակնկալությունները:

Բացի այդ, կը տրամադրուին ընդունման և ուղղորդման ծառայություններ, խորհրդատուութիւն և աջակցութիւն բոլոր դպրոցական խորհուրդներու կողմէ, ընտրելու համար ձեզի յարմար վերականգման ծրագիր որ կը համապատասխանէ ձեր անձնական և մասնագիտական նպատակներուն:

Ֆրանսերէնի ուսուցման ծառայությունները կը տրամադրուին չափահասներու կրթութեան կեդրոններէն ներս:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՂԹԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐՈՒՆ



## Բարի եկաք Քվեբէկի ֆրանսախօս կառավարական դպրոցներու մէջ

Քվեբէկի բնակչութեան 80% ը ֆրանսախօս է, Ֆրանսերէնը Քվեբէկի պաշտօնական լեզուն է: Հետեւաբար ձեր գաւակները պէտք է յաճախեն Ֆրանսախօս դպրոցներ մինչև երկրորդական հանգրուանը:

տարեկան դպրոց կը յաճախեն նուազագոյնը 180 օր:

Ուսումը ձրի է եւ պարտադիր 6-16 տարեկան բոլոր երեխաներուն համար: Ուսումնական տարեշրջանը կը սկսի Օգոստոսի վերջաւորութեան կամ Մեպտեմբերի սկիզբը եւ կը տեւէ մինչև Յունիսի վերջին օրերը: Աշակերտները

Ուսումը կրթութեան, գիտութեան և բարձր գիտութեան նախարարութեան պատասխանատուութիւնն է: Իսկ դպրոցներու տնօրինումը ըլլան անոնք մանկապարտէզ, նախակրթարան թէ երկրորդական տեղական խորհուրդներու կը պատկանի: Քվեբէկի շրջանը ունի 72 տեղական ուսումնական խորհուրդներ:

## Ուսումնական հանգրուաններ

### Մանկապարտեզ (6 տարեկանէն նուազ)

Մանկապարտեզ կամ “maternelle”, ուր կրնան յաճախել աշակերտներ, որոնք բոլորած են 5 տարեկանը՝ Մեպտեմբեր 30-էն առաջ: Դպրոցական օրուայ տեւողութիւնը 4:15 ժամ է, Երկուշաբթիէն Ուրբաթ: Կարգ մը թաղամասերու ուսումնական խորհուրդները մանկապարտեզ կը յատկացնեն այն մանուկներուն, որոնք բոլորած են 4 տարեկանը :

Մանկապարտեզ յաճախելը պարտադիր չէ, սակայն 5 տարեկան երեխաներու 98% ը արդէն կը յաճախեն զայն: Այն աշակերտները որոնք Ֆրանսախօս չեն կ’օգտուին սորուելով լեզուն, աւելի լաւ պատրաստուելու համար նախակրթարանին:

### Նախակրթարան (6-12 տարեկան)

Նախակրթարան կրնան յաճախել աշակերտներ որոնք 6 տարիքը կը բոլորեն Մեպտեմբեր 30-էն առաջ: Դպրոցական օրուայ տեւողութիւնը մօտաւորապէս 5 ժամ է, Երկուշաբթիէն Ուրբաթ: Նախակրթարանը կը տեւէ 6 տարի:

### Երկրորդական (12-18 տարեկան)

Երկրորդական կրնան յաճախել 12-18 տարեկան աշակերտները: Դպրոցական օրուայ տեւողութիւնը մօտաւորապէս 5 ժամ է, Երկուշաբթիէն Ուրբաթ: Երկրորդականը կը տեւէ մօտաւորապէս 5 տարի: Առաջին երկու տարիներուն բոլոր աշակերտներուն կը դասաւանդուին նոյն նիւթերը, իսկ յետոյ աշակերտները առիթ կ’ունենան ընտրելու տարբեր նիւթեր ըստ անհատական հետաքրքրութեան եւ կարողութեան:

## Երեխաները դպրոց արձանագրել

Ձեր Երեխաները դպրոց արձանագրելու համար պէտք է դիմէք ձեր քաղաքի կամ թաղամասի ուսումնական խորհուրդին: Անոնք ձեզի տեղեկութիւններ կուտան յարմար միջոցներու եւ անձերու մասին որոնց պէտք է դիմէք ձեր երեխաները դպրոց արձանագրելու համար: Ձեր թաղամասի ուսումնական խորհուրդին հետ կապուելու կայքը հետեւեալն է՝ [www.education.gouv.qc.ca](http://www.education.gouv.qc.ca) ապա՝ Trouver une école (գտնել դպրոց մը), Actualités (լուրեր) հատվածի տակ: Կարելի է հեռաձայնել կրթութեան, գիտութեան և բարձր գիտութեան նախարարութեան թուին 1 866 747-6626, որ անվճար է:

Արձանագրելու համար կը պահանջուին կարգ մը փաստաթուղթեր, որոք բնագիր կամ բնագրի պատճէն ըլլալու են:

- Տան հասցէի փաստաթուղթ (օրինակ՝ էլեքտրականութեան ստացագիր, հեռախօսի ստացագիր, կառավարական նամականի, տան վարձքի փաստաթուղթ ևլն...):
- Եթէ կը բնակիք ազգականներու մօտ եւ չէք կրնար ներկայացել տան հասցէի փաստաթուղթ, ձեր հիւրընկալը պէտք է ամբողջացնէ յատուկ դիմումագիր եւ տան հասցէն պարունակող երկու փաստաթուղթ ներկայացնէ:
- Երեխաներու ծննդեան փաստաթուղթ (Ֆրանսերէնի կամ Անգլերէնի թրգմանում)
- Գաղթի փաստաթուղթեր

Հետեւեալ թուղթերը գտնուելու պարագային կրնան օգտակար դառնալ արձանագրութեան.

- Անցագիր որ ի գորու է
- Աշակերտներուն Դպրոցի արձանագրութեան փաստաթուղթեր, վիճակացոյց...
- Առողջական վիճակի տետրակ
- Հոգեբուժի կամ այլ մասնագէտի գնահատում